ԳԼՈՒԽ ՃԺԷ.

Ամենայն տեղիս 'ի վերայ աշխարհին հայոց թիֆանկ շինողն շինեսցի մեծութեամբ լայնութեամբ և ամենայն կերպարանօք յամահաւասար որ չախմախ գուլի և սմբէն մինն միւսին Օգնական լինի։

ԳԼՈՒԽ ՃԺԸ.

Ամենայն արու որ հասանի 'ի հասակս երկոտասան ամաց հարկ 'ի վերայ ծնողաց լիցի առաջին ժառանգութենէ 'ի ստացուածքէն իւրեանց գնեսցեն թիֆանկ մի և սուսեր մի տացեն տղային և հարկիցեն նմա մտանել արհեստս զինուորի։

ԳԼՈՒԽ ՃԺԹ.

Ամենայն որ ցուցանէ առաջի ատենի տանուտերաց արհեստս նորագոյթ և շահաւէտութեան վասն հասարակաց բարութեան 'ի վերայ աշխարհին հայոց գտցի պարգևս ըստ արժանաւորութեան բանին իւրոյ։

ԳԼՈՒԽ ՃԻ.

Ամենայն ոք որ հուչակեսցի և հաստատեսցի առաջի ատենի տանուտերաց գաղտնի խորհուրդ և գործ չարութեան որում կարի ՁԼասել հասա-